Լ. Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆ, Խոսքիմաստային տարարժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատարակչություն, 1996, 257 էջ։

Լեզվի զարգացման տարժամանակյա կտրվածքում բառերի բովանդակային պլանում տեղի են ունենում փոփոխություններ, որոնք կարող են ազդել նրանց խոսքիմաստային իմաստի վրա՝ հաճախ առաջ բերելով խոսքիմաստային տարարժեքություն։ Թեև մեզանում զգալի աշխատանքներ են տարվել բառերի խոսքիմաստային տարարժեքության քննության ուղղությամբ (Գ. Ջահուկյան, Ն. Պառնասյան, Լ. Խաչատրյան), և այդ բնագավառում բազմաթիվ հարցեր իրենց դիտական ճշմարիտ լուծումն են ստացել, այնուամենայնիվ ,այդօրինակ բառերի քննությունը սահմանափակվել է ազատ կապակցությունների շրջանակներում։ Նկատի չի առնվել կայուն կապակցությունների (ԿԿ) իմաստային կառուցվածքը։

Այս հարցերի հետազոտությանն է նվիրված Լ. Մ. Խաչատրյանի նոր աշխատությունը՝ «Խոսքիմաստային տարարժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում», որտեղ խնդրո առարկա երևույթն առաջին անգամ ուսումնասիրվում է ԿԿ-ների հարթության վրա։

Հայտնի է, որ ԿԿ-ների բաղադրիչ բառերի գնահատման հարցը լեզվաբանական գրականության մեջ տարակարծությունների տեղիք է տվել։ Դարձվածքը նեղ առումով ըմբռնող մասնագետները (Ա. Մոլոտկով, Մ. Ֆոմինա, Վ. Ժուկով, Վ. Թելիա) ենթադրում են, որ դրանց բաղադրիչները զրկված են բառին հատուկ բառաքերականական հատկանիշներից, իսկ դարձվածքը չեն էլ համարում բառակապակցություն։ Դարձվածքը լայն առումով ըմբռնող մասնագետները (Վ. Վինոգրադով, Ա. Կունին, Դ. Շմելյով, Ա. Ամոսիցկի, Պ. Բեդիրյան, Խ. Բաղիկյան) ընդունում են, որ ամեն մի ԿԿ-ն դարձվածք է, որի բաղադրիչ տարրերը բառեր են, իսկ դարձվածքը, եթե կառուցված է բառակապակցության կաղապարով, բառակապակցություն է։

Հետևելով լեզվաբանական գրականության մեջ առկա երկրորդ տեսակետին՝ հեղինակը, սակայն, չի ընկնում ծայրահեղության մեջ։ Նա ձեռնպահ է մնում դարձվածային սերտաճումների բառաքերականական քննությունից, որովհետև այդպիսի կառույցներում բաղադրիչների բառային նշանակությունը չեզոքանում է։ Լ. Խաչատրյանը հետազոտության ծիրի մեջ է ընդգրկում ԿԿ-ների մնացած տեսակները՝ դարձվածային միասնություններ, դարձվածային կապակցություններ, դարձվածային արտահայտություններ, որոնց բաղադրիչները՝ կառույցի կազմիչ տարրերը, լիովին կամ մասամբ պահպանելով իրենց բառական նշանակությունները, կարող են հատկանշվել քերականական կարգերով՝ միաժամանակ արտահայտելով փոխաբերական-դարձվածային նշանակություններ։

Աշխատության մեջ հեղինակը կառուցվածքային լեզվաբանության հետազոտության մեթոդներով քննում է խոսքիմաստային տարարժեքության դրսևորումներն արդի արևելահայերենի ԿԿ-ներում։ Նա կառույցի բաղադրիչների ձևաբանաշարահյուսական առանձնահատկությունները բացահայտում է նրանց բառադարձվածային հատկանիշների փոխկապակցված քննությամբ։ Նա ընդգծում է, որ ի տարբերություն ազատ կապակցությունների, ԿԿ-ներում խոսքիմաստային տարարժեքությունը կրում է համաժամանակյա բնույթ։ Լ. Խաչատրյանը խնդրո առարկա երևույթը դիտարկում է երկու տեսանկյունից. մի կողմից՝ կառույցի բաղադրիչների, մյուս կողմից՝ ամբողջական կառույցի իմաստային կառուցվածքում։

Հեղինակը կառույցի բաղադրիչների տարարժեքությունը պայմանավորում է մի շարք գործոններով։ Դրանցից կարևորվում են՝ 1) բաղադրիչների նախնական տարարժեքությունը. հմմտ. խոր տարարժեք բառի իմաստաարժեքային փրացումները հետևյալ ԿԿ-ներում.

ա) ածական—«ըստ ժամանակի բավականին անցած. զգալիորեն առաջացած»—խոր աշուն. խոր ձմեռ, խոր գիշեր, խոր ծերություն և այլն,

բ) մակբայ—«մինչև գետին»—խոր գլուխ տալ. «հավիտյան, երկարատև»—խոր քուն մտնել, «հանգիստ, անհոգ»—խոր շունչ քաշել։

2) Բաղադրիչների դարձվածայնացումը. այսպես, այդ ոլորտով կարճ ածականը ԿԿ-ներում ձեռք է բերել նաև մակբայական իմաստ ու արժեք, ինչպես՝

ա) ածական—«տհաս, թերուս»—կարճ խելք, խելքը կարճ, իմ կարճ խելքով, «վատ»—կարճ ճիշդություն, «մեղավոր»—կարճ լեզու ունենալ, «լուռ, անխոս»—լեզուն կարճ,

բ) մակբայ—«համառոտ, սեղմ. արագ»—(խոսքը) կարճ կապել՝ կտրել. ասել՝ ասած, կարճ մտածել՝ երկար կարել:

3) Կապակցության փոխկաղապարումը։ Այս ուղիով դատարկ ածականը, օրինակ, ԿԿ-ներում ձեռք է բերել նաև մակբայական իմաստ ու արժեք, ինչպես՝

ա) ածական—«անխելք, անմիտ»—գլուխը դատարկ, դատարկ գլուխ. «ունայն»—գրպանը դատարկ, դատարկ գրպանով. դատարկ կարաս, դատարկ փորով.

բ) մակբայ—դառը դատել՝ դատարկ ձեռքով՝ գրպանով նստել>դառը դատել՝ դատարկ նստել, դատարկ խոսքեր դուրս տալ>դատարկ դուրս տալ,ծովը գնալ՝ դատարկ ձեռքով հետ գալ>ծովը գնալ՝ դատարկ հետ գալ։

Այս սկզբունքով նա քննում է ԿԿ-ների բաղադրիչների երկարժեք (գոյ.||ած., գոյ.||մկբ., գոյ.||կապ, ած.||մկբ., մկբ.||կապ) և եռարժեք (գոյ.||ած.||մկբ., գոյ.||մկբ.||կապ., մկբ.||ած.||կապ) համատեղումները։

Լ. Խաչատրյանն անդրադարձել է նաև ԿԿ-ների բաղադրիչների ներխոսքիմասային բազմիմաստությանը։ Գրքին ամբողջական է ներկայացված բայական ընդհանուր բաղադրիչով հարադրությունների սեռային բազմիմաստությունը։ Խորացնելով այս մարզում նախորդ հետազոտողների (Ա. Աբրահամյան, Ա. Մարգարյան) տեսակետները՝ նա ընդհանրացնում է, որ բայական հարադրության ներսում ևս կարող են տեղի ունենալ սեռային իմաստի տեղաշարժեր, որի հետևանքով ընդհանուր բաղադրիչով մի շարք հարադրություններ կարող են ցուցաբերել սեռային զուգաձևություն (կրկնասեռություն), ինչպես՝ բերել–առաջ բերել, դուրս բերել, դեմ բերել (ներգործ.) և երեխա բերել, ճպատ բերել (չեզ.)։

Խոսքիմասային տարարժեքության ուսումնասիրությունն ամբողջական դարձնելու նպատակով հեղինակն այն քննում է նաև ԿԿ-ների իմաստային կառուցվածքում։ ԿԿ-ների տարարժեքությունը հետևանք է ամբողջական կառույցի իմաստաարժեքային մասնակի տեղաշարժերի, որ իր հերթին հենվում է հետևյալ գործոնների վրա՝ 1) կառույցի բազմիմաստությունը, ինչպես, օրինակ, երկար–բարակ, երկար ու բարակ (պատմություն)՝ «մանրամասն, ձանձրալի» (ած.), «երկարատև, դանդաղ, մանրամասն»՝ երկար ու բարակ (պատմել) (մկբ.)։ 2) Շարահյուսական գործառույթի փոփոխությունը, ինչպես՝ տաք գլուխ «շուտ բռնկվող անձ» (գոյ.)>«համարձակ, հանդուգն» (ած.)։ 3) Կառույցի հարացուցային ձևերի անկախությունը, ինչպես՝ աղ ու հաց>աղ ու հացով (մարդ)՝ «հյուրասեր, բարեգործ» (ած.), աղ ու հացով (դիմավորել)՝ «աղ ու հացը ձեռքին՝ իբրև հյուրասիրության նշան, երդման ձև» (մկբ.)։ 4) Կառույցի փոխկաղապարումը, ինչպես՝ աչքը բաց>բաց աչքով (երիտասարդ)՝ «աչքաբաց, ճարպիկ, ուշիմ» (ած.), բաց աչքով (տեսնել)՝ «բացահայտ, ակնհայտ», բաց աչքով (սայթաքել)՝ «զգոն լինելով» (մկբ.)։

Աշխատության մեջ վերլուծվող բազմաթիվ ու բազմազան կապակցությունները ներկայացվում են բացառապես ճիշտ ընտրված բնագրային օրինակներով, որոնք աշխատությանը մի տեսակ գեղարվեստական լիցք են հաղորդում։ Ճիշտ է, այնտեղ կան և վիճահարույց հարցեր, սակայն հեղինակը, հենվելով հայրենական ու արտասահմանյան լեզվաբանական մտքի նվաճումների վրա, ստեղծել է արժեքավոր ու ինքնատիպ մի աշխատություն՝ առաջադիր հարցերին տալով բավական սպառիչ պատասխաններ։ Լ. Խաչատրյանի գրախոսվող աշխատությունն արժեքավոր ներդրում է ինչպես խոսքիմասային տարարժեքության, այնպես էլ դարձվածային միավորների ձևաիմաստային քննության ասպարեզում, օգտակար թե՛ ուսանողությանը, թե՛ մասնագետներին ընդհանրապես։

Ն. Ա. ՄԻՐՏՉՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր